ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» նոյեմբերի 2019 թվականի N: 312 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի նոյեմբերի 25-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին 2019 թվականի նոյեմբերի 27-ին, 28-ին և 29-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ղազանչի բնակավայր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում համապատասխանության աուդիտ իրականացնելու նպատակով:
2. Մուշեղ Մուրադյանին, Արտակ Հայրապետյանին և Սամվել Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է